# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Արմավիրի մարզի Արաքս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2013թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ:*

*Հարգելի համայնքի բնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվեք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արաքս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած հատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:*

*Արաքսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, բնակչությունը՝ 2052 մարդ, մոտ 1302 ընտրող, 1290հա հողատարածություն, որից ոռոգվող 682հա հողատարածք: 2013 թվականին մշակվել է շուրջ 207.6 հա հողատարածքներ, անցյալ տարվա համեմատությամբ 5 հա ավել: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:*

## <u>*Ըստ բնագավառների կատարվել են*</u>

### *ֆինանսական բնագավառում*

*Կազմակերպվել է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները:Նախատեսված 9170.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 9416.1 հազար դրամ սեփական եկամուտ, այսինքն ապահովել ենք սեփական եկամուտների հավաքագրման 102.7 տոկոս կատարողական:*
*Գյուղապետարանը աշխատավարձի և եկամտային հարկի պարտքեր չունի:*
*Համայնքի հաշվի համարին կուտակվել է 12700,0 հազար դրամ գումար, որը նախատեսված է ծախսել համայնքի հիմնախնդիրների լուծման վրա:*

### *Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարված աշխատանքների բնագավառում*

*Համայնքում գործում են պարի խմբակ, խմբակում կան 32 աշակերտներ:*
*Գործում է նաև Քինգ-բոքսինգի խմբակ, որին մասնակցում են թվով 43 աշակերտներ:*
*Խմբակի աշակերտները մասնակցում են տարբեր Հանրապետական մրցումներին:*
*Համայնքում գործում է գրադարան, որից օգտվում են 100-ից ավել տարբեր տարիքի բնակիչներ:*
*Նախադպրոցական դասընթացներ կազմակերպելու համար Արաքսի ՊՈԱԿ-ին տրամադրվել է 2180.0 հազար դրամ գումար:*

### *Պաշտպանության բնագավառում*

*Կազմակերպվել է զինապարտների հաշվառման, նրանց բուժզննման աշխատանքները: Ուժեղացվել է կապը զինկոմի հետ, կազմակերպվել է զորահավաքի աշխատանքներ:*
*Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ համայնքի բնակիչների և սահմանապահ ուղեկալների հրամանատարության միջև:*

*Սոցիալական ծառայության բնագավառում*

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվով 19 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն՝ընդամենը 1850.0 հազար դրամի չափով:
Համայնքի բնակչությունից թվով տասնչորս մահացածների համար գնվել են ծաղկեպսակներ՝ ընդհանուր գումարով 320.0 հազար դրամի չափով:
Հաղթանակի օրվա՝ մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, թվով 4 վետերանների համար գնվել են նվերներ յուրաքանչյուրին հիսուն հազարական դրամի:
Սահմանապահների օրվա՝ մայիսի 28-ի կապակցությամբ համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 2 ուղեկալների համար գնվել են նվերներ ընդհանուր գումարով մեկ հարյուր հիսուն հազար դրամի:
Համայնքի բյուջեի հաշվին կառուցվել է գյուղի գերեզմանատան ոռոգման ցանցը:

*Գյուղատնտեսության բնագավառում*

Կազմակերպվել են գարնանացան, պարարտացման և ոռոգման աշխատանքներ և պետության կողմից տրված պարատանյութը բաշխվել է համայնքի բնակիչներին:
Կազմակերպվել են ցրտահերկի աշխատանքներ:
Սկսել ենք ոռոգման նպատակով արտեզյան հորերի հորատման աշխատանքներ:

*Շրջակա միջավայրի պաշտպանություն*

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է աղբահանություն՝ շուրջ 120.0 հա բնակավայրի տարածքից, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1100.0 հազար դրամ գումար:

*Համայնքի հիմնախնդիրներ*

Համայնքի հիմնախնդիրները այսօր էլ մնում են.

1. Համայնքի գազաֆիկացումը,
2. Ոռոգման ջրի անբավարարությունը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:
5. Ներհամայնքային ճանապարհների նորոգում:

Արաքս համայնքի ղեկավար՝ / / Ա. Միքայելյան